

ԾԱՂԻԿ ԿԸ ՀՐԱՏԱՐԱՐԻՈՒԹՅԱՆ ԴՈՐՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ ԵՄԻՍԿՈՒՆԻ ԹԻՒՆԸ

Բաժանորդագրին ԿԱՆԻՍԻԿԻ ԹԻՈՒՆՔԻՆՅ ՀԱՄԱՐ ԵՄԻՍԿՈՒՆԻ ԹԻՒՆԸ ԿԱՆԻՍԻԿԻ ԹԻՈՒՆՔԻՆՅ ՀԱՄԱՐ ԵՄԻՍԿՈՒՆԻ ԹԻՒՆԸ ԿԱՆԻՍԻԿԻ ԹԻՈՒՆՔԻՆՅ ՀԱՄԱՐ ԵՄԻՍԿՈՒՆԻ ԹԻՒՆԸ

Գաւառներէն զրամբ տեղ Օսմանեան Նամա- կադըզմ ևս կ'ընդունուի :

Միայն երեք թիւ ապառիկ կը զրկուի , այնու- հետեւ բաժանորդագրին չը վճարողը կը դադրի թերթ ընդունելէ :

Ծանուցման տողը 2 զրշ :

40 Փարս

ԾԱՂԻԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային, Գրական եւ Քաղաքական

40 Փարս

ԾԱՂԻԿԻ ՎԵՐԱԵՐԵԿԱԼ ԱՄԼԵՆ ԳՈՐԾԻ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ

Ս.Ո. ՏԻՐԻԿԻ-ՀԱՅԱՍՏԱՆԻԿԻ

ՅՈՒՆԱՆ Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

Կ. Պոլիս, Պաշտէ-Գաբու, Թաշ Խան, Թիւ 50.

در علیحدہ فتحہ قیو سنده طاش خانندہ ۵۰ نومرودہ

«زاعیک» عزتہ سی مدیری بالاقاشیان حوونان

HOVNAN PALACACHIAN

Directeur de journal arménien « Dzaghik »,

Rue Bahtché-Kapou, Tach Han, 50

CONSTANTINOPLE

ՆՈՐ ԵՐԶԱՆ — Գ. ՏԱՐԻ. ԹԻՒ 2

ՇԱԲԱԹ

26 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1892

ԶԸ ԽԱԲՈՒՆԻՔ

Սովորութիւնն ըրած եմք մեր ազգէն դուրս, օտարաց մէջ, թշնամիներ տեսնել, թշնամիներ երեւակայել մեր սուրբ եկեղեցւոյն դէմ, իսկ մեր մէջ իսկապէս դոյութիւն ունեցող թշնամիներն ամենեւին չը տեսնել, ոչ միայն չը տեսնել, այլ և բարեկամ ճանչնալ զանոնք: Արտաքին թշնամին, եթէ դոյութիւն ունենայ իսկ, չէ կարող մնասել մեզ այնքան որքան ներքին թշնամին: Փոխանակ մեզմէ հեռուները, մեր ազգէն դուրս մնտուելու մեր եկեղեցւոյն թըշնամիները, շատ մը բարոյական անդարմանելի մնասներէ ազատ պիտի մնայինք, եթէ սովորէինք ճանչնալ նոյն իսկ մեր մէջ Հայու անունով կամ գլխաւոր և Հայու դրամով ապրող այն անձինքը, որոց բովանդակ գործունէութեան կէտ նպատակին է մնասել մեր առաքելական ուղղափառ Սուրբ եկեղեցւոյն և քար ու քանդ ընել զայն:

Շատ զարմանալի և շատ ցաւալի, բայց հաստատ իրողութիւն է որ արդարեւ կան մեր մէջ այդպիսիք որ տասնեակ տարիներէ ի վեր կը գործեն ի վնաս մեր եկեղեցւոյն:

Այդ մի քանի մարդիկ ըստ ինքեան ոչինչ են և բնականաբար պէտք չէ որ կարողանային մեր եկեղեցւոյն մնասել: Բայց եթէ կարողացած են մնասել, պատճառը այն չէ որ իրենք մեծ զօրութիւն, ազդեցութիւն ու հեղինակութիւն ունին, այլ այն՝ որ մեր ժողովուրդը շատ միամիտ է ու դիւրաւ խաբուող, մանաւանդ խաբուել սիրող: Եկեղեցւոյն ժողովուրդով է և ժողովուրդն ինքն իսկ է: Երբ ժողովուրդը զուրկ է իւր շահույ գիտակցութենէն, բարին ու չարը, բարեկամը ու թշնամին, ճշմարիտն ու սուտը զանազանելու կարողութենէն, նենգամիտ մարդիկ շատ դիւրութեամբ կարող են խաղալ այդպիսի ժողովուրդեան մը հետ, և այլ ևայլ միջոցներով խաբել խաբել զայն ու մոլորեցնել հեռացնել իւր եկեղեցւոյն, որ աշխարհիս վրայ ամենէն նուիրական բանն է իրեն համար:

Մեր ժողովուրդը շատ միամիտ է ըսինք, և իրաւ ալ այնպէս է: Եւ ոչ մէկ

բան այնքան որոշ կերպով կը հաստատէ մեր ժողովուրդեան միամտութիւնը, որքան այն պարագայն թէ ի՞նչպէս կը կարգւայ լրագիրը և ի՞նչպէս կը հասկընայ, կ'ըմբռնէ զայն: Շատ քիչերը կան որ իրենց սեպհական խելքով մտածեն լրագրութեան միջոցաւ յուզուած խնդրոյ մը վրայ, խորհրդածեն և եղբակցութեան մը հասնին: Ընթերցողաց ստուար մեծամասնութիւնը ինքն իւր խելքով ամենեւին չը խորհի. ի՞նչ հարկ. խմբագիրը մտածած է իրեն համար. կ'իւրացնէ անոր մտածումը, կամ աւելի ճիշդը, յայտնած գաղափարը, և օրտնեղութիւն կ'ըզայ երբ պատահի մարդոց որք տարբեր գաղափար յայտնեն. կը զայրանայ և չը կրնար հասկընալ թէ ի՞նչպէս կարելի է լրագրոյն յայտնած գաղափարէն տարբեր գաղափար ունենալ:

Դատողութիւն չունեցող, կարգացած յօդուածին արտաքին ձեւերէն խաբուող, իսկ անոր խորը, ներքինը պատահին թափանցել չը գիտցող ժողովուրդ մը խաբել ու մոլորեցնելն դիւրին ի՞նչ կայ:

Բարեբաղդաբար, Ռուսահայոց մէջ ժողովուրդեան ստուար մեծամասնութիւնը՝ ի շնորհս Նոր-Դար լրագրոյն՝ սկսած է ճանչնալ այլ ևս իւր բարեկամն ու թշնամին, և զգուշանալ իրեն ներկայացուած մնասակար գաղափարներու յարելէ ու մոլորուելէ: Դժբաղդաբար Օսմանեան հպատակ Հայք դեռ շատ հեռի են՝ այս նկատմամբ Ռուսահպատակ Հայոց հաւասարելէ, և մեր եկեղեցւոյն տակաւին շատ բան պիտի տուի, մինչև որ մենք ևս սովորենք մեր կարգացածին խորը, ներքին նպատակին թափանձել ու չը խաբուել ու չը մոլորել:

Մշակ շատ աշխատեցաւ որ ժողովուրդը պաղ և անտարբեր մնայ եկեղեցական ու վանական հաստատութեանց նկատմամբ և բոլորովին հեռանայ իւր մայրենի եկեղեցւէն. բարեբաղդաբար իւր դիմաց կար Մեղուն և 1884էն ի վեր կայ Նոր-Դարը: Մշակ որքան աշխատեցաւ անլուր և քստմանի առասպելներ յօրինելու Ս. Էջմիածնայ վրայ և ժողովուրդեան սիրտը պողեցնելու անկէ, ժողովուրդը աւելի տար

արտով վարեցաւ անոր՝ ի շնորհս Մեղուն և Նոր-Դարի: Հիմա հոս սկսեց են նմանօրինակ առասպելներ յօրինել Ս. Երուսաղեմայ վրայ՝ այդ նուիրական վայրէն ալ հեռու պահելու համար ժողովուրդը: Էջմիածինը մոռնանք, Երուսաղէմին երես դարձունենք, վերջապէս տակաւ օտարանանք մեր եկեղեցիէն, մեր զաւակներն ալ օտարաբաւան դպրոցներ դըրկենք, ուրեմն մենք մեզ համար ի՞նչ պահենք: Մենք ի՞նչ ունինք աշխարհի վրայ մեր եկեղեցիէն ու դպրոցէն զատ:

ՊԱՐՈՆԵԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԸ

Պարոնեան իւր կենաց մէջ ունեցաւ շատ համակրողներ և մի քանի մտերիմ բարեկամներ: Իւր մարմինը, տարի ու կէս յառաջ, հաղիւ գերեզմանի մէջ ամփոփուել էր, երբ զանազան տեղերէ հռչակ ելաւ թէ ազգովին սիրոյ և երախտագիտութեան ցոյց մ'ընել արժան էր մեծ գրագիրին, և միաբանութեամբ որոշուեցաւ ընդհանուր հանգանակութիւն մ'ընելով ապահովել իւր այրի կնոջ ու երկու մանկահասակ զաւակաց նիւթական վիճակը: Հայ դատաւարակ մը առաջին օրինակն ընծայեց՝ արու զաւակին ամէն հոգն ստանձնելով. կը մնար հանգանակութիւնն ի դուրս հանել. ո՞վ պիտի ընէր նախաձեռնարկը. մինչ այս մինչ այն, ազգին՝ երիտասարդութեան ընտրելագոյն անձերէն խումբակ մը կազմուեցաւ, նախագահութեամբ Պատրիարքական Դեր. Փոխանորդ Հօր. սուրբ մեծ եռանդ ցուցին, մեծագոյն խոստումներ աւին ընչեզ դատակարգէն, հաւատացին և հաւատացուցին թէ փայլուն, պատուաբեր, անակնկալ արգեամբ պիտի պսակուի իրենց ձեռնարկը. տարին կը բոլորի և իրենց հաշուեկշռոյն մէջ ղէրօնեն առանց թիւի կը մնան:

Յերկունս կայր լեռան ահագին

Եւ ծնանէր մուկն չնչին:

Ոչ, մուկ մ'անգամ չը ծնաւ այդ խմբակին երկունքէն: Իսկ այն նուէրներն որ այժմ կը հաւաքուին լրագրական նախաձեռնութեամբ, Պարոնեանի հեգ այրւոյն և որդւոց ապագայն ա-

պահովելու բնութիւնը չունին և հազիւ կը բաւեն իրենց օրական ապրուստին, մինչ ի սկզբան խորհուած հանգանակութեան նպատակն աւելի հիմնաւոր բարւոքում մը պատրաստել էր այդ ընտանեաց կացութեան. գոնէ հինգ հարիւր ոսկի պիտի հաւաքուէր և մինչև մանուկներուն չափահաս լինելը՝ տոկոսը պիտի տրուէր իրենց՝ իբր աւօրեայ ապրուստի միջոց, և յետոյ մայր գումարը պիտի ծառայէր դրամագլուխ լինելու և երկու որդեքը տեղաւորելու:

Այդ ընտիր երիտասարդք կանուխէն գործի սկսելով արգելք եղան այլոց՝ նոյն գործին գլուխ կանգնել, և երբ ժամանակ անցնելով դասայիք կը լինին ու ապարդիւն կ'անհետան, շատ աննպաստ դադարաբեր կ'ընծայեն իրենց բարոյական նկարագրին վրայ. պարտին իրենց պատիւը վրէժ, մանաւանդ որ այժմու հանգանակութիւնը չը խոստանար այն արդիւնքը զոր իրենք ակնկալել տուն:

ՅՈՒՐԵՆ

Ս Ի Ա Լ Ս Ը

Հրատարակուեցաւ քանիցս թէ, Ս. Էջմիածնայ Սինոդի անդամ Արխիմանդիտ Եպիս. Սեդրակեան Պարսկաստան գնացած է այն տեղի ազգային և եկեղեցական գործերը կարգի գնելու համար:

Թողունք որ Արխիմանդիտ Եպիսկոպոս՝ ազգային և եկեղեցական գործեր կարգի գնելու համար իւր հանգիստը վրդովող մարդ չէ, և թէ երբեք այդպիսի տրամադրութիւն ունենայ իսկ, օրինօք կարող չէ երթալ. Պաշտօնէի այդ տրամադրութիւնը բացարձակ է և անոր հակառակ կարելի չէ գործել: Սինոդական մը կարող չէ արտասահման երթալ՝ առանց կայսերական արտօնութեան: Եւ այսպիսի կայսերական արտօնութիւն մը ստանալն ամբողջ ամիսներու գործ է: Արխիմանդիտ Եպիս. ե՞րբ ստացաւ այդ արտօնութիւնը և ե՞րբ գնաց Պարսկաստան: Սխալն ինքնին բացայայտ չ'երեւիր:



ՎՐԱՑԻՈՑ ՄԷՋ ՀԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐ

Տեղական թերթերը հաղորդում են, որ վրաց «Ջիշիլի» մանկական ամսագրի խմբագիր-հրատարակչուհի տիկին Թուամանովա-Ծերեթեյին (ծննդեամբ և ազգով հայ) Էրասուք է ստացել Թիֆլիսում՝ իբրև իւր ամսագրին յաւելում՝ դարձեալ վրաց լեզուով պատկերազարդ շաբաթաթերթ հրատարակելու: Այդ նոր վրացերէն շաբաթաթերթը կոչուելու է «Կուտի», որ թարգմանի «Ակոս»:

Փառք Աստուծոյ, Հայոց ոյժերն այնքան շատցել են, որ էլ տեղ չեն գտնում Հայերի մէջ և Հայերի համար

գործելու և ստիպուած ուրիշներին են առաջարկում իրենց ծառայութիւնն ի պարծանս Հայ ազգի: Վրաց բեմի վրաց գործող Հայ դերասաններ ու դերասանուհիներ ունինք (Իդէպ, հենց դրանց են յանձնուած Հայի խայտառակ «տիպ» ներկայացնող դերերը, որոնցով լիքն են վրացերէն համարեալ թատերագութիւնները), վրացերէն գրող Հայեր ունինք, վրացերէն օրացոյց կազմող Հայ կայ. կան Հայեր, որոնք գործում են վրաց զանազան ընկերութիւններին մէջ. է՛հ, վրացերէն պարբերական թերթեր խմբագրողն ու հրատարակողն էլ վերոյիշեալ յարգոյթնաւոր տիկինն է:

Նոր-Դար

ԱՁԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Վեհ. Յուլիանը իւր հայրանամ հոգածութեամբ բարեհաճեցաւ, յառաջիկայ տօնական աւուրց աւթիւ, 400 ոսկի շնորհել Ազգ. Պատրիարքարանի անտուկին:

— Մաղնիսայէն Արշակ Էֆ. Հիւսնեան մեզ զրկած է 50 դրուշ ինպատկ Ազգ. Հիւանդանոցին: Յանձնեցինք այս գումարը Հիւանդանոցի Հոգաբարձութեան:

— Կրօն. Ժողովին խմանալով որ Նիկոմիդիոյ Հայ մանուկներէն 100ի չափ Հռոմէականաց վարժարանը կը յաճախեն և Ս. Ծննդեան տօնի օրերը կաթովիկ եկեղեցւոյն տօնական տարօրոյթութեանց ալ ներկայ կը գտնուին, որոնց դրել Նիկոմիդիոյ առաջնորդին և իրաց վիճակին վրայ իւր ուշադրութիւնը հըրաւիրել: Որոշեց նաեւ առաջարկել Ուսումն. Խորհրդոյ որ հաճի իւր կողմանէ մասնաւոր քննիչ մը կամ նոյն իսկ կրթութեան տեսուչը զրկել՝ ազգային վարժարանի անգոհացուցիչ վիճակը քննելու և իրաց վիճակը պարզելու համար:

— Մայրաքաղաքէն Նոր-Դարի կը դըրեն թէ, Ամեն. Տ. Մեկքիսեդեկ Եպիս. Մուրատեան մի նոր պատկառելի ուշխառութիւն է պատրաստել, Ընդհանուր Բրիտանական եկեղեցեաց պատմութիւնը:

— Ս. Պատրիարքը վաղն առաւօտ պիտի պատարագէ Սամաթիոյ Նոր Թաղի վերաշինուած գլխադիր Ս. Յակովբ եկեղեցւոյն մէջ և պիտի կատարէ Օծման արարողութիւնը: Վերաշինութեան մասնախմբի կողմանէ առննապետ Բարսեղ Էֆ. Իսթանպուլուէն և Թաղ. Խորհրդոյ՝ կողմանէ Ն. Լ. օքմակեօղեան և Գ. Ճիվանեան Էֆէնտիք կը հրաւիրեն բարեպաշտ ազգայինները ներկայ գլուխուիլ և վայելել շնորհաբաշխութեան օրհնութիւնները:

Սթամպուլուէն Էֆէնտիք չորեքշաբթի օր Գաղաքական Ժողովոյ ու Տնտեսական Խորհրդոյ ներկայանալով, հրաւիրեց Ժողովականները ներկայ գտնուիլ

Օծման հանդիսին: Տնտեսական Խորհուրդը շնորհակալութիւն յայտնեց Սթամպուլուէն Էֆէնտիք իւր աշխատութեանցը համար:

— Թ. Հաղիպարի մէջ կը կարգանք թէ կայս. Իրատէ մը հրամայած է տալ ի Գաղաքի Հայոց եկեղեցի մը շինելու համար Ազգ. Պատրիարքարանի կողմանէ խնդրուած արտօնութիւնը: Արդարութեան և կրօնական գործոց նախարարութիւնը զայս ծանուցած է Գաղաքապետութեան, որ իւր կողմանէ հարկ եղած հրամանները տուած է թաղապետութեան Ժ. շրջանակին (Գաղաքի վրդ):

— Գեր. Տ. Մատթէոս Եպիս. Իզմիրլեան Բերայի քարոզիչ կարգուեցաւ:

Բերայի քահանայից գասուն ու Թաղականաց կողմանէ պատգամաւորութիւն մը չորեքշաբթի օր Իւսկիւտար երթալով, հրաւիրեց Գեր. Իզմիրլեան Սրբազան իւր բնակութիւնը փոխադրել ի Բերա և ստանձնել թաղին քարոզչութեան պաշտօնը, ըստ փափաքանայ Բերայի ազգայնոց և ըստ որոշման Կրօնական Ժողովոյ:

Գեր. Իզմիրլեան յայտնեց թէ այս տօնական աւուրց մէջ չը կրնար թողուլ Իւսկիւտարի Ս. Կարապետ եկեղեցին որոյ քարոզչութիւնը վարած է երկար տարիներէ հետէ և թէ Ս. Ծննդէն յետոյ միայն կրնայ հաստատուիլ ի Բերա:

— Տնտեսական Խորհուրդը որոշեց վաւերացնել Վանայ Արտամէտ գիւղի վարժարանին խնամակալութիւնը, և Ակնայ Ապու չէլի գիւղի վարժարանի պահանջքի խնդրոյն համար կարելուոր տնօրէնեց:

— Էջմիածնէն Նոր-Դարի կը դրեն. Պ. Գալուստ Տ. Մկրտիչեանն ապրում է Պարիզում, վանքի ծախքով: Պարոնը Պարիզից գիւռ վերադառնալու միտք չունի և ահա՝ երրորդ անգամն է որ նրան փոյլ է ուղարկուած. սխալուած չեմ լինել՝ թէ ասեմ որ մի քանի ամսուայ Պարիզեան կենցաղավարութեան համար ծախքը վաղուց 2000 ֆրակուց անցել է: Այս տարի բաղձառետակ ծախքերի տարի լինելով, պէտք է գոհ լինինք որ փոյլն էլ տուած է և բաւականաչափ ծախսուած է:

— Էջմիածնէն կը դրեն Նոր-Դարի:

« . . . Յաւալին այն է որ նախկին գանձապահ Բարթոլոմէոս վարդապետը տկար է և շատ տկար: Նրան վիճակուած է բնակիլ մի այնպիսի սենեկի մէջ որ խոնաւ է ինչպէս գինեատուն, ցուրտ՝ ինչպէս դերեղման. արեւի ճառագայթները՝ սառելու երկիւղից՝ այն տեղ չեն ընկնում, ոչ ամառ և ոչ ձմեռ: Հայր Բարթոլոմէոսը միայն մի միւթաբուրձիւն ունի, պատի մէջ քանդակուած խաչն է այն. դէպ ի սոյն խաչն է դարձած Հ. Բարթոլոմէոսի հոյեակցը: այդ է նրա հաւատ ու մխի-

Թարիչը: Բարոյապէս անյողդողդ Բար-
թուղիմէոսն ընկճուեցաւ խոնաւութեան
տակ: Նա խնդրում է պարագ մնացած
տախտակներէն մի քանիսը, իւր սենե-
կի մէջ գետինը շարելու: Թերեւս դրա-
նով խոնաւութիւնը փոքր ինչ մեղմա-
նայ: Նորան պատասխանում են որ այդ-
կարելի չէ, որովհետեւ տախտակները կը
խոնաւանան և այլ ևս պէտք չեն գալ:

«Հայր Բարթուղիմէոսի բերանից ար-
խն է դնում: Հունի նա ոչ փոքր ինչ
չոր ու տաք բնակարան և ոչ էլ նիւթա-
կան միջոց: Բժշկի մասին խօսելն աւե-
լորդ է:»

Այս վիճակին մէջ հիւանդը չոր
և ցամաք սենեակ մը կը խնդրէ Թախան-
ձանքով՝ առողջանալու համար, և իւր
խնդիրը կը մերժուի:

— Կեսարիոյ Առաջնորդ Գեր. Տ. Տըր-
դաս վարդ. Պալեան, վաղը Ս. Պատա-
րագ պիտի մատուցանէ Կէտիկ-Վաշայի
Ս. Յովհաննէս եկեղեցւոյն մէջ:

— Պատրիարքարանի շինութեան գոր-
ծին համար Բաղաքական Ժողովն ինչ
ինչ յանձնարարութիւններ քննել է Եւ-
մուից Տեսուչ Էփէնտիին, յանձնարարե-
լով միանգամայն ճարտարապետաց քնն-
նել տալ Պատրիարքարանի շէնքին ար-
դի վիճակը:

— Գլխաւոր Գեր. Տ. Տըրդաս վարդ. Պալեան
նոր հաւանդէս մը կազմակերպել ու-
րոշած է:

— Ուսումնական Խորհուրդը նկատու-
ղութեան առաւ. մէկ քանի վարժարան-
ներու Հոգաբարձութեանց կողմանէ ներ-
կայացեալ դերն, որոնց մէջ գիտել
տալով թէ այս տարւոյ Օրացոյցին մէջ,
բացի ընկալալ տօնական կերակրինէ,
նորամուտ կերակրներ ևս աւելցած են,
կը խնդրէին Խորհուրդէն հրահանգ տալ
իրենց թէ այդ նորամուտ կերակրներն
պարտաւոր են վախել վարժարաններն
թէ ոչ, Խորհուրդը նկատելով որ խնդ-
րելը Կրօն. Ժողովոյ ձեռնհասութեան
կը վերաբերի, որոնց այս մասին յիշ-
եալ Ժողովոյ կարծիքն առնել և ըստ
այնմ շրջաբերականով մը հարկ եղած հը-
րահանգը տալ Հոգաբարձութեանց:

— Անցեալ շաբաթ օր, գեկտ. 19
«Արեւելք» Թիֆլիզէն ստացած է հեռա-
գիր մը որ կը ծանուցանէր «Մշակ» իրա-
ւագիր Պ. Գրիգոր Արծրունւոյ մահը:
Մանրամասն տեղեկութիւնք գեռ կը
պակսին:

ՅՈՒՐՏ ԵՒ ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒ ԱՌԹԻԻ

Ձմեռ է, ձիւն ու անձրեւ, ցուրտ ու
խոնաւ է:

Բայց որի՞ համար է եղանակի այս
անխուսափելի պատիժը:

Ձմեռն ամենախիստ ցրտերի մէջ հա-
րուստներէդ չուրջը փթթում է անվերջ
գարուն: Կահաւորուած, տաք սենեկի
մէջ վայելում էք ձեր սրտի ցանկացած
ամէն տեսակ ուտելիք ու խմելիքներ:

Հոնգիստ է ձեր քունը փափուկ ան-
կողքի մէջ, մինչդեռ ձեր գործարանը,
վաճառատունը, արհեստանոցը կամ
լուղալի պաշտօնը բերում է ձեզ իւր
անսպառ եկամուտը և ձեր քունը չէ
վրդովում ոչ ապրուստի հոգը, ոչ պար-
տաւորով ստիպմունքը և ոչինչ: Գուրաւ
ձմեռն ցրտաշունչ եղանակին յաղթելու
համար ունիք եղանակին յարմար տաք
հագուստներ և պատում էք փակ կառ-
քերի մէջ, արհամարհելով ձմեռն սպառ-
նալիքը: Այս բոլոր նախազգուշութիւն-
ներէն յետոյ, գուք աւելի սակաւ մտա-
հոգ էք պատահական հիւանդութիւն-
ներէ համար, որովհետեւ բժիշկները ի
սէր ձեր կախարդիչ ոսկիների, ձեր ա-
պարանքի սեմի վրայ կանգնած՝ պատ-
րաստ են միշտ ձեր սպասին:

Ձմեռը աղքատի համար է:

Աղքատի խոնաւ, մութ և առողջա-
պահական բոլոր պայմաններից զուրկ
բնակարանի ծակտիկներից միշտ ներս է
փչում սառսուեցուցիչ ցուրտը. քաղ-
ցած ստամոքսով նա կծկվում է ցնցո-
տիներից կազմած անկողնի մէջ. իւր
չունչը իւր վառարանն է. նա չունի խա-
ղաղ քուն, որովհետեւ ընտանիքը պա-
հանջում է հաց, տան տէրը՝ վարձ,
խանութպանը՝ դրամ, բայց նա չունի
ոչ մի եկամուտի աղբիւր. նրա միակ
դրամագլուխը իւր ձեռքերն են, որի
վրայ դրած իւր ամբողջ յոյսը, գեռ
լոյս ու մութին դուրս է գալիս տանից
օրական պարէնը հայթայթելու: Ձիւնը
վերսից թափվում է գլխին, ցեխը ա-
զատ ներս է մտնում պատառոտուած
կօշիկներից: Գուրաւ հասել է նորա ոս-
կընքին, կծկել է նրան, բայց նա որ-
պէս սառած մի մանղէն զանգուած՝ միշտ
գլորվում է հացի ետեւից. իսկ հացը
միշտ հեռու է վախճում այդ խղճալի
արարածից: Նա քանի որ կարողանում
է քայքայուած մարմինը սրունքների
վրայ կրել, տանում է այդ հիւանդ-
բեռը աշխատեցնելու, մինչև որ ծնդ-
ները կքուծեն և նա ուժասպառ ընկ-
նում է ցած, ճիշդ այնպէս, որպէս
բեռնակրի անասունը, որ ընկնում է այն
տեղ, ուր պատահում է: Եւ նրան՝ գէթ
իսէր մարդկութեան, չէ մօտենում
հարուստ մարդկանցից ոչ մէկը, երբ
այդ թշուառ աշխատաւորի ընտանիքի
մէջ թագաւորում է այնքան ծայրայեղ
յուսահատութիւն, որպիսին նկարագ-
րելու համար անզօր է մարդկային միտ-
քըն ու գրիչը:

Շուտով կը գան և մեծ օրեր, նոր տա-
րի, Ծնունդ և Մկրտութիւն: Սրանք քը-
րիստոնեայ աղգերի համար եղական օ-
րեր են, որոնց քրիստոնէական զգաց-
մանց հետ մեծ առնչութիւն ունին:

Հարուստներդ, գէթ արտաքին ցոյ-
ցերով, բառի բուն նշանակութեամբ
մասնակցում էք մեծ օրերի մեծ հան-
դիսին: Ձեր նմաններին հիւրասիրելու
համար անում էք շուայլ ծախքեր, ձեր
չուրջը լցնում էք Աստուծոյ տուած բո-

լոր բարիքով և ապահովութեամբ լողում
էք այդ բարիքների մէջ, կարծես թէ
մարդկային աղգի այդ մեծ փրկիչը մի
միայն աշխարհ եկած լինէր բացառա-
պէս Ձեզ ուրախութիւն պատճառե-
լու...:

Այն ինչ այն կողմը, որպէս մարմնա-
ցած գոթաղբութիւն, որպէս հակա-
պատկեր կանգնած է աղքատների մի
ստուար թիւ: Հէնց այն ժամանակ, երբ
եկեղեցեաց զանգակները հնչում են,
երբ սրբազան բեմից աւետում է Քրի-
ստոսի ծնունդը ու դուք այնքան ու-
րախ էք, — այո՛, այդ վարկենին մտէք
աղքատին տունը, աղքատի դրութեան
մէջ. ուսումնասիրեցէք նրա հոգեկան
վիճակը, նրա սիրտը...: Եւ այնտեղ կը
գտնէք ծայրայեղ թշուառութիւն,
թրծուած տարիների աղի արտասուքով
կը գտնէք տառապեալ հոգի եւ յուսա-
հատ, քայքայուած սիրտ, որոնք կարող
չեն ցնցուիլ և ոչ մի աւետարներ ձայնի
առաջ, ոչ մի ֆրիստտի ծննդեան աւետ-
ման առաջ...:

Մարդկային աղգի փրկիչը խոնարհ-
ութեամբ իր երկնաւոր գահից, ձեզ ճըշ-
մարիտ կեանք պարգեւելու համար տա-
րաւ ամէն հալածանք, ամէն չարչարանք
և խաչ ելաւ, աշխարհին խոնարհութեան
և անձնուիրութեան օրինակ տալու հա-
մար. իսկ դուք, հարուստներ, մի՞թէ
կը զրանաք իջնել ձեր հոգեղէն ապարա-
նից, մանկէ թշուառի, կարօտեալի տու-
նը՝ նրա վիշտը ամբրելու, նրա արտասու-
քը սրբելու, տալով միջոց խաղաղ և
ուրախ սրտով լսելու Քրիստոսի Ծննդ-
կան լուրը, գուք որ խնջոքների մէջ
ոչինչ չէք խնայում, գուք որ հարստնե-
աց հանդէսներում թանկագին ընծա-
ներով էք պատում երջանիկ զոյգերին,
որոնք կարօտութիւն անգամ չունին:

Ձեր Օգոստոսիաւ կայսրը իր փա-
ռապանք գահի բարձունքից օգնու-
թեան ձեռք է մեկնում անթիւ փա-
տակեալներին, հրկիզեալներին, հեղեղ-
եալներին. հիմնում է անկեղծոց և այլ
հաստատութիւններ, ուր սրբվում են
և պիտի սրբուին անթիւ թշուառների
արտասուքը, ճշմարիտ հօր և անզուգա-
կան բարեբարի օրինակ տալով իւր հը-
պատակներին անխորապէս: Իսկ դուք
այնքան փոքր լինելով կայսրից, չէք
կամենում շարժուիլ ձեր տեղից, աղ-
քատ տեսած ժամանակ գարձնում էք
ձեր ապարանքի և դրասենեկի գոնե-
րը. միշտ անմատչելի էք, միշտ «աղան
աւանդ չէ»...:

Եթէ ճշմարիտ ու հաւատարիմ հը-
պատակ էք, հետեւեցէք ձեր Օգոստոս-
իաւ կայսեր օրինակին:

Աղքատական ընկերութիւնք եթէ
ուղենան նոյն իսկ իրենց պաշտօնը սրբու-
թեամբ կատարել, ոչինչ արած կը լի-
նին, եթէ մեղնից իւրաքանչիւրը ըստ
կարողութեան օժանդակ չը հանդիսա-
նայ նրանց:

Բարեգործութիւնը մի խոշոր աղա-
մանդ է, որ կը փայլէ նոյն իսկ անթա-
փանց խաւարի մէջ:

Բարիքը որպէս կենսատու արեւ կը
ճառագայթէ և կը լուսաւորէ ձեր ամ-
բողջ երկրի հազար անգամ աւելի
քան այն հարստութիւնը, որ ունիք
դուք ձեր արկղերում:

Օգնեցէք...

ԱՐՇԱԿ

ԹԵ՛ Ի՞ՆՁՊԵՍ ԽՄԻԱԳՐԵՑԻ

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ ՄԸ

Նրկրագործական լրագրի մը առժամանակեայ տնօրէնութիւնը առաջարկուած լինելով ինձ, ընդունեցի այս պաշտօնը, բայց ոչ առանց երկիւղի: Այնպիսի կացութեան մը մէջ էի որ կ'ստիպէի զիս լուրջ կերպով նկատողութեան առնելու թողականերու խնդիրը: Լրագրին տէր և խմբագիրը ճամբորդութիւնն պիտի ընէր. ուստի առաջարկեալ պայմաններն ընդունեցի և իւր տեղը անցայ:

Տեսակ մը հեշտութիւն կ'զգայի ինքզինքն նորին դարձի վրայ զգալով, և ամբողջ շաբաթը, անձանձիր հաճոյքով մը աշխատեցայ: Լրագիրը մամուլ տակ գրուեցաւ և ամբողջ օրը անձկութեամբ սպասեցի գիտնալու համար թէ իմ ճիգերս իրագրիտաց ուղղութիւնը պիտի դրաւէ՞ն: Մութը արդէն կոխած էր երբ գրասենեկէս դուրս ելայ. այս միջոցին արանց և տղայոց խումբ մը, որ սանդուխտ վարը կեցած էին, շուտով մէկ կողմ գացին ճամբայ բանալու համար ինձ, և լսեցի որ խումբին մէջէն մէկ երկու հոգի կ'ըսէին՝ ի՞նքն է: — Բնական է որ այս պզտիկ գէպքը մեծ հաճոյք պատճառեց ինձ: Յաջորդ առաւօտուն, նոյն տեսակ ուրիշ խումբ մը տեսայ սանդուխտ ստորոտը, մինչդեռ փողոցը, զոյգ զոյգ կամ առանձին կեցած մարդիկ հետաքրքրու թեամբ ինձ կը նայէին, երբ անոնց առջեւէն անցայ: Խումբը բաժնուեցաւ և մէկ կողմ գնաց մօտեցած պահուս և լսեցի որ խումբին մէջէն մէկը ըսաւ. Աչքերուն նայեցէք մէկ մը: Այնպէս կեղծեցի թէ ես չէի հասկնար ինձ համար ցոյց տըրուած այս սքանչելուքը, բայց չիտակը խոսելու համար մեծ հպարտութիւն կ'զգայի և միաժամ դիմ նամակաւ մը պատմել ամենը հօրաքրոջս: Արագ արագ վեր ելայ սանդուխտն աստիճաններէն գրասենեակս երթալու համար. դրան մօտ հասած ատենս, զուարթ ձայներ և որոտընդոտ ծիծաղ մը լսեցի: Դուռը բացի և երկու երիտասարդներ տեսայ գիւղացւոյ կերպարանքով: Նրբ գիտ տեսան, լուրջ կերպարանք մ'առին և տփուկեցան, յետոյ զէպ ի պատուհանը գացին, ուրիշ շառաչմամբ վար ցատկեցին: Ապրեցայ մնացի:

Կէս ժամ վերջը ներս մտաւ ծեր պարոն մը, որու մօրուքը կը ծածանէր կուրծքին վրայ: Ձինքը հրախրեցի նստելու, աթոռ մ'առաւ, բայց մտաւանջ կը թուէր: Գլխարկը հանեց և գետինը դրաւ, յետոյ անոր մէջէն հանեց կարմիր մետաքսէ թաշկինակ մը և մեր լրագրին մէկ թիւը զոր ծնագոյն վրայ դրաւ: Ակնոցը թաշկինակովը սրբելով, ինձ ըսաւ. Նոր խմբագրապետը դուք էք:

Հաստատական պատասխան տուի:

— Ասկէ առաջ երկրագործական լրագրի աշխատակցած էք:

— Ոչ, ըսի. առաջին փորձս է:

— Շատ լաւ: Նրկրագործութեան վրայ դործնական տեղեկութիւններ ունիք:

— Ոչ, ո և է տեղեկութիւն չունիմ:

— Այդպէս ըլլալը գուշակեցի, ըսաւ ծեր պարոնը, ակնոցը գնելով և խոժոռ խոժոռ ինձ նայելով: Քաղցրաբարոյ գէպքով լրագիրը ծալեց, յետոյ շարայարեց. կարգամ

ձեղ այն կտորը որ այս գուշակութիւնը ներշնչեց ինձ: Սա առջեւի յօդուածն է: Մտիկ ըրէք և տեսէք թէ ձեր գրած յօդուածն է՞:

« Շողգամները պէտք չէ՛ երբեք խել, որովհետեւ ասիկա անոնց միտաւելուն պատճառ կ'ըլլայ: Աւելի աղէկ է սղայ մը հանել ծառին վրայ և թոթուել տալ: »

— Հիմայ, ի՞նչ կ'ըսէք այս գրուածքին. որովհետեւ կ'ենթադրեմ թէ ասիկա գրողը դուք էք:

— Ի՞նչ կ'ըսեմ: Կ'ըսեմ թէ շատ լաւ գրուածք մ'է: Կ'ըսեմ թէ կատարելապէս իրաւացի է ըսածս: Լաւ գիտեմ թէ ամէն տարի միլիոնաւոր գրիւ չողգամ կը կորսուի, որովհետեւ կէս մը հասունցած ատեն կը փրցնեն, մինչդեռ ընդհակառակը եթէ լաւ մը հանէին ծառին վրայ ու թոթուել տային...:

— Մարդ Աստուծոյ, չողգամը ծառի վրայ չը բռնիր:

— Իրա՞ւ, աղէկ որ ըսիք: Բայց ո՞վ ըսաւ թէ չողգամը ծառի վրայ կը բռնիր: Ես փոխարեքարար, բոլորովին փոխարեքարար խօսել ուզեցի: Հասկցող մարդը գիտէ թէ ես ըսել ուզած եմ որ լաւը արիւղ թօթուէ:

Այն ատեն ծեր պարոնը ոտքի ելաւ, լրագիրը ծուրի ծուրի ըրաւ, վրան կոխկուտեց, գաւազանովը քանի մը առարկայ կտորտեց և ինձ ըսաւ թէ կով էի: Յետոյ դուրս ելաւ դուռը իւր ետեւէն շաշնցնելով. կարճ կապեմ, այնպէս մը վարուեցաւ որ զգացի թէ բան մը իւր կամքին դարձ էր, բայց ինչ բան ըլլալը չը գիտնալուս՝ չէի կրնար իւր կամքը տեղը տանիլ:

Պահ մը ետքը, գիտական ման երկայնահասակ մէկը, ճարպուտ մեծ խոպոպներով որք մինչև իւր ուսերուն վրայ կը կախուէին, և շարաթուան մը մօրուքով՝ որ իւր գէպքին բլուրներուն և ձորերուն վրայ կը ցցուէին, սենեկին մէջ սպրդեցաւ, և անշարժ կեցաւ, մտաւ շրթանց վրայ, գլուխը և մարմինը ծածկ մտիկ ընող մարդու մը գիրքով: Ոչ մէկ ձայն լսուեցաւ, նորէն մըտիկ ըրաւ, դարձեալ ձայն չը կայ: Այն ատեն բանալին կղպանքին մէջ դարձուց, յետոյ ոտից մատներուն ծայրին վրայ կոխելով, զգուշութեամբ գէպ ինձ յառաջացաւ: Քիչ մը հեռուն կանգ առաւ, խորին հետաքրքրութեամբ քանի մը վայրկեան երեսս գիտեց մանրազնիւն, մեր լրագրին ծալած մէկ թիւը հանեց գրողանէն և ըսաւ. Ահա ձեր գրածը: Շուտ կարգացէք զայն, որպէս զի սիրտս հանգարաւ:

Հետեւեալը կարգացի և ցորչալի յառաջ կը տանէի ընթերցումս, կը տեսնէի թէ իւր խոժոռ գէպքը կը պարզուէր և ամէն անհանգստութիւն կ'անհետանար երեսին վերայէն որոյ վրայ հանգիստն ու անդորրութիւնն կը տարածուէին զերդ մի բարեբար լուսնակ աւերեալ դաշտանկարի մը վրայ:

« Կուսնօն գեղեցիկ թաշուն մ'է, բայց զայն մեծցնելը շատ խնամքի կը կարօտի: Յունիսէն առաջ և սեպտեմբերէն ետքը պէտք չէ բերել զայն: Ձմեռը, պէտք է տաք տեղ մը պահել զայն ուր կարենայ իւր ձագերը թխուել: »

« Յայտնի է թէ ցորենը ուշ պիտի մնայ այս տարի: Հետեւաբար, հողագործք լաւ կ'ընեն եթէ սկսին ցանել իրենց ցորենի

հասկերը յուլիսի մէջ և ոչ օգոստոսի: »

— «Բողիւռօն կոչուած դգուսին նկատմամբ երկու խօսք: Այս ունդը շատ յարգի է Նոր-Անգլիոյ բնիկներուն մէջ, որք հողարջէն նախամեծար կը համարին զայն՝ պտղաւոր կարկանդակ շինելու համար և որք արքայամօրէն ալ նախամեծար կը համարին զայն կովերը անուցանելու համար, նկատելով որ աւելի անդարար և նոյնքան ակորժահամ է. բողիւռօնը նարնջի ընտանիքէն միակ ուսուցիչն է որ լաւ յառաջ կուգայ ի Հիւսիս: »

Ունկնդիրս՝ ինքզինքն դուրս ելած՝ մէկէն ի մէկ ոտքի ելաւ և եկաւ երկու ձեռներս սեղմեց ըսելով՝

— Հերիք է, հերիք է, Հիմայ գիտեմ թէ կանոնաւոր վիճակիս մէջ եմ, քանի որ ձեր կարգացածն ալ բաւ առ բաւ իմ կարգացածիս պէս է: Բայց, երիտասարդ օտարական, այս առաւօտ, երբ ձեր յօդուածն առաջին անգամ կարդացի, իւրովի ըսի: Մինչև ցարդ թէ և բարեկամներս ծայրայեղ աչալիջութեամբ կը հսկեն վրաս, երբէք չէի կարծած թէ յիմար էի, բայց հիմայ կամայ կամայ հաւատալ կ'սկսիմ: Այս գաղափարը այնպիսի ճիշ մ'արձակել տուաւ ինձ որ երկու մոյն հեռուէն պիտի լսէիք և ոտքի ելայ որպէս զի երթամ մէկը սպաննեմ, որովհետեւ, կ'ըմբռնէք, գիտէի թէ օրին մէկը ընելիքս այն էր և կ'ուզէի որ մը առաջ ընէի: Բայց այս փողոցէն անցած ատենս մտածեցի որ անգամ մը դամ զձեզ տեսնեմ, որպէս զի բոլորովին համոզուիմ: Հիմայ համոզումս կատարեալ է: Մնայք բարեաւ, Պարոն, մնայք բարեաւ, մաքիս վրայէն ծանր բեռ մը վերցուցիք: Բանականութիւնս ձեր երկրագործական յօդուածներէն միոյն փորձութիւնն կրեց և գիտեմ թէ հիմայ ոչինչ պիտի կարենայ զայն խախտել հանել: Մնայք բարեաւ, պարոն:

Բաւական նեղացած էի: Բայց զխուս եկած փորձանքին վրայ խորհելու ժամանակ չունեցայ, տեսայ որ ներս մտաւ այն խումբագիրն որ զիս իրեն փոխանորդ կարգած էր: Տխուր, խռովեալ, վհատեալ կը թուէր: « Դէշ գործ, ըսաւ ինձ, շատ գէշ. լրագրին անունը կտորեցաւ և վախճամ մէկ մ'ալ շտիկուելիք չունի: Իրաւ, երբէք այսքան օրինակ ծախուած չէր, երբէք այսքան նշանաւոր եղած չէր. բայց իւր խենդ նշանաւոր ըլլալը և մտքի տկարութեամբ ստակ շահիլը աղէկ բան մ'է: »

Սիրելի բարեկամս, ինչպէս կը հաւատաս թէ ես պարկեշտ մարդ մ'եմ, նոյպէս պէտք է հաւատաս թէ մեր փողոցը լեցուն մարդ է, նոյն իսկ կան որ պատերուն ու վանդակապատերուն վրայ կ'ենեն, որք կ'սպասեն անգամ մը զձեզ տեսնել, որովհետեւ զձեզ խենդ կը համարին: Եւ ի՞նչպէս խենդ չը կարծեն զձեզ, կարգալէ վերջ ձեր յօդուածներն որոնք ամօթ, մուր են օրագրութեան համար: Ձեզ ո՞վ ըսաւ որ այսպիսի օրագրի մը խմբագրութիւնը ընդունիք: Կ'երեւի թէ դուք երկրագործութեան վերայ ամենեւին գաղափար չունիք: Ակոյր կը շփոթէք ցաքանին հետ, կը խօսիք այն եղանակին վրայ յորում կովերը եղջիւր կը փոխեն, կը յաճնարարէք ընտանեցնել ժանտակուղը՝ իւր սիրունութեան և քաջ մկնորսակ ըլլալուն պատճառաւ: — Ա՛, բա-

բեկամ, եթէ տգիտութիւն փնտռելը ձեր բովանդակ կենաց ուսմանց առարկայն ըրած ըլլայիք, երբէք չը պիտի կարողանայիք հասնիլ այն բարձր պատուոյն զոր ստացայք այսօր: Եւ ասանկ բան չէի տեսած: Ձեր այն դիտողութիւնը թէ հնդկական շագանակին արժէքը օր քան զօր վաճառականութեան մէջ կը բարձրանայ, միակ այս դիտողութիւնը, կ'ըսեմ, բաւական է լրագիրը կործանելու: Հոս գործ չունիք, հանգիստի պէտք չունիմ, ձեզ նման փոխանորդ ունեցողը հանգիստ չը կրնար վայելիլ: Միշտ պիտի վախնայի որ նոր թշնամանք մը չընէք: Ինքզինքէս դուրս կ'ընեմ ամէն անգամ որ կը խորհիմ թէ ստորէներու վտաններու վերայ խօսած էք սա խորագրին տակ, Դաշտանկար պարտիզի: Այլ ևս հոս գործ չունիք, զայցէք: Եւ ոչ մէկ երկրային նկատողութիւն պիտի կարենար հիմայ համոզել զիս հանգիստ ընել: Այս, ինչո՞ւ չըսիք ինձ թէ երկրագործութեան ծայրէն պոչէն չէիք հասնար:

Բարկանալ կ'սկսէի, չողգամ և ընդհանրապէս մակերեսները տուի իրեն. — Առաջին անգամն է որ, ըսի, այսպիսի դիտողութիւն մը կը լսեմ: Տասն և չորս տարի կայ որ լրագրութեան մէջ եմ և առաջին անգամն է որ կը լսեմ թէ մարդ մը բան գիտնալու պէտք ունի եղեր լրագիր մը խմբագրելու համար: Երկրորդական կարգի թերթերու թատերական քննադատութեան յօդուածները ո՞վ կը գրէ, եթէ ոչ չըտես հնակարկաններու և դեղադործի աշակերտներու խումբ մը որք թատրոնի լեզուէն այնքան բան կը հասկնան որքան ես ագտորակի լեզուէն: Ո՞վ կը գրադատէ: Այնպիսի մարդիկ որ գրական գործ մը չունին: Ելեւմտական ու անտեսական ամենէն լուրջ յօդուածները ո՞վ կը խմբագրէ: Այս նիւթէն բնաւ չը հասկցող մարդիկ: Ո՞վ կը գրէ ժողովարարութեան մասին յօդուածները և անէծք կը կարգայ փոքր սկահակներուն վրայ: Այնպիսի մարդիկ որ ա՛յն ատեն ժողովարար պիտի լինին, երբ գերեզման իջնեն: Վերջապէս, ո՞վ կը խմբագրէ երկրագործական լրագիրները: Ձեզ նման տգէտ անձինք, որք չեն յաջողած ոչ իրր քերթող, ոչ իրր վիպասան, ոչ իրր թատերագու և ոչ իրր լրագրիչ՝ մեծ քաղաքներու մէջ, և որք վերջ ի վերջոյ կը յարին կը փարին երկրագործութեան՝ որ ժամանակ մը կ'արգիլէ: Դանոնք երթալ չաջողելէ յիմարանոցին մէջ:

Ա՛, լրագրութեան նկատմամբ ըսե՛ն սովորեցնել կ'ուզէք ինձ: Բայց, պարոն, աչն մինչև ֆէն գիտեմ ես թէ ի՞նչ տեսակ բան է լրագրութիւնը և ձեզ ըսեմ թէ մարդ որչափ քիչ բան հասկնայ լրագրութենէ, լրագիրը այնքան աւելի կը բռնուի, յարգ կը վայելէ, շահարեր կ'ըլլայ: Աստուած գիտէ թէ եթէ ես տգէտ մ'եղած ըլլայի՝ փոխանակ մշակեալ միտք մ'ունենալու, և անպատկառ՝ փոխանակ երկչոտ լինելու, այս ցուրտ ու անձնասէր աշխարհի մէջ համբաւ կրնայի չահիլ: Կը մեկնիմ, պարոն, դուք այնքան լաւ, մարդավայել կերպով վարուեցաք ինձ հետ որ այլ ևս մեկնիլ միայն կը մնայ ինձ, բայց կը մեկնիմ խիղճս հանդարտ, պարտքս և խոստումս կատարած ըլլալու՝ ձեր ինձ գծած չափովը: Ես ձեզ ըսած էի թէ կարող էի ընկերութեան ամէն դասա-

կարգի մարդոց շահեկան գործել լրագիրն և այնպէս ալ ըրի: Խոստացած էի ձեր թերթէն մինչև 20.000 օրինակ ծախել տալ, և իրաւ ալ պիտի յաջողէի, եթէ երկու չարաթ ալ տայիք ինձ: Ձեզ գտայ ընթերցողաց լաւագոյն դասակարգն զոր կրնայ ունենալ երկրագործական լրագիր մը, որովհետեւ մէկ հոգագործ չկայ անոնց մէջ: Մեր աւրուելէն դուք կը մնասէք, փոած գլուխ, մնայք բարեաւ:

Ահա այսպէս բաժնուեցայ իրմէ:

(Թարգ. ի Գաղղ.) Յ. Թ. Հ.

ԱՌ ՀԵՌԱՑԵԱԼՆ

Չոյզ երկարի այն արանետ Որոյ վրայէն դու հեռացար, Հոգիս առած տարիք քեզ հետ, Թողով զիս հոս վերջապահար:

Հին պարբային կիսախարխուլ Նքստած մէկ եզրն, քարի վրայ, Գաղտնի հառաքն տալով կույ, Աջքս ճամբող յառած մընայ:

Հոն մամուկատ քարք ծեծող Այլքներուն ճայնք լքսեմ, Հովին ծովին քրքիջ հեգնող Միտքս սեղմ: ցաւօր դըմեմ:

Այնան իրկուսն պաղին տըւած Խորհուրդներով ճակատս այսող, Ծըծեմ աղի այն օղբ քաց Խոնջ ճամբորդին նըման ծարող:

Թառած ինչպէս գոռկան մի բու Հասնող մարին մէջ մեմ միմակ, Խօլ գառանցմամբ ես անարկու Դառնամ անձիս չարագոռակ:

Յօղոտ աչերս փնտռեն ի գոռ, Յառած անբարք միշտ դեպ ի վեր, Գեղաժքայիտ աստղիկն այն լուռ, Վըկայ սիրոյն ես ուխտին մեր:

Խաւար երկնից տակ պոռքկացող Կոհակներուն ցաւմոսկրիպար, Խղճն ունեցող անգն անլուղ Ըլլալ քնդ միշտ ալ անճառար:

Յոյս ես հաւատք կորցած սքըտեւ ժամանակին անողորմ աջն, Ամայի կուրծքս աղեկեղ Կտտանաց լոկ կ'անկեմայ խաջն:

Ա. ՇԱՄԲԱՐԳԱՔԱՆ

ՈՂԲԱԼԻ ՄՍՀԱՅԵԼՈՅ ՄԸ ՅԻՇԱՍԱԿԻՆ

Սրբոց Յակովբեանց մայր վանքը իւր ծոցը սնուցած, խնամած և բարոյապէս դաստիարակած՝ կենաց հազիւ 22 դարուններ բոլորող մի հոգեծին և պատուական զաւակ տուաւ սև ու ցուրտ հողին անցեալ շաբթու ճիշդ Հրեշտակապետաց տօնի օրը: Ո՞վ էր այդ տարաբախդ երիտասարդը, որ անդինարար կեանքի մը աստարիղին վերայ հազիւ ուրեմն թեւակոխած՝ վերահաս անողորմելի հիւանդութեան մը անգութ ճի-

րաններէն չը կարողանալով ճողորպիլ, իւր ծաղիկ կեանքէն դառն մահուամբ կը զրաւի: Այդ համակրելի հէգ երիտասարդն էր ընկի Նիկոպոլսեցի (Շապին-Գարահիսար) Բարթուղիմէոս Կարմըրեանն, բարեպաշտ ընտանեաց համեստաբարոյ զաւակ մը, որոյ հայրն էր իւր քաղաքի Ս. Նիկողայոս Եկեղեցւոյն Տ. Ներշապուհ մաքրակօծն Քահանայն: 1887ին Ս. Թոմոսոյ կողմանէ, ինչպէս ուրիշ քաղաքներէ, նոյնպէս Նիկոպոլսէն երկու տղայ կ'ուզուի ժառ. վարժարանին համար. տեղւոյն Թաղ. Խորհուրդը՝ իրր և յարմարագոյններ, նաև իրենց փափաքանաց համաձայն Բարթուղիմէոս Կարմիրեան և Կարապետ Օգանեան ուսումնասէր պատանիները կ'որոշէ զրկել յերուսաղէմ, որք արդէն մինչ ցոյն վայր դպրոցականներ եղած են: Երկուքն ուսանողք օրինաւոր վկայականներով ու յանձնարարականօք կուգան Ս. Թոմոս, և վարչութիւնը դպրոցական լինելու պայմանաց ըստ ամենայնի յարմար դանելով դանոնք՝ անմիջապէս վարժարան կ'ընդունի: Շուրջ երեք ու կէս տարի երկուքն ընկերք աշակերտելով ուսման՝ աւանդեալ գիտութեանց գոհացուցիչ հմտութեամբ և կենաց ու բարոյական բարւոք դաստիարակութեամբ աւարտեցին իրենց շրջանը և փայլուն վկայականներ ստանալով, ելան վարժարանէն և մտան բուն վանական կեանքին մէջ, և որովհետեւ մեր նպատակը Բարթուղիմէոսին վրայ խօսել է, ուրեմն թողով իւր սրտակից բարի ընկերը, շարունակեմք նորա պատմութիւնը: Խոհականն Բարթուղիմէոս իւր կենաց շրջանին մէջ մի կողմանէ Աթոռէն իրեն յանձնեալ գործերը կը կատարէր, և միւս կողմանէ ուսած գիտութիւններէն ընտրած մասնաճիւղերը կատարելագործելու մեծ ջանք կ'ընէր. ամենէն աւելի կը հետեւէր Աստուածարանութեան և որ Պ. Թորոս Ջուղայեցւոյն յառաջադէմ և սիրելագոյն աշակերտներէն մին էր: Հակիրճ բանիւ, Բարթուղիմէոս իւր գովելի վարուքը, ընտիր ձիրքերովն և ուսումնասէր կեանքովը լաւ ու արդիւնաւոր ապագայ մը կը խոստանար. այլ աւա՛ղ, զի վարադայ Խաչի Բ. օրը իմացանք թէ՛ ցրտառութեամբ մը տկարացեր է նա, և 5—6 օրէն անախունելի ու զարմանալի հիւանդութիւն մը ծանրանալով վերան՝ օր քան զօր սոսկալի կերպարան առաւ: Հոս գրիչս յառաջ չերթար հիւանդին հետզհետէ ստացած վիճակին կամ հիւանդութեան տեսակին նկարագիրն ընել, այլ խղճիս պարտականութիւնը կատարած ըլլալու համար սա պիտի ըսեմ թէ՛ Բարթուղիմէոս իրր և ազգին զաւակը և ամենեցուն համակրելին, տկարացած օրէն բարւոք կերպիւ սկսաւ դարմանուիլ ու խնամուիլ, իսկ երբ մահացու հիւանդութիւնը իւր դառն գոյներով յերեւան եկաւ, յայնժամ Վեհ. Կաթուղիկոս, Սրբազան Պատրիարք և Նպիսկոպոսունք, վարդապետք և վերջապէս բովանդակ միարանութիւնը՝ գնահատելի հոգածութեամբ՝ քաղաքիս նշանաւոր բժիշկներու խորհրդոց ու հրահանգաց համաձայն, ամէն կարելի միջոց ի գործ դնելու հոգն ունեցան, որպէս զի նա ապաքինի, լուսանայ. սակայն վերջապէս հոգեւոր ու մարմնաւոր բոլոր պարտականութիւնք անթերի կատարուելէ յետոյ՝ հակառակ այնքան ճգանց, այնքան ջանից ու զոհողութեանց, նա ըստ մարմնոյ մահացաւ,

բայց իւր անմահ ու մաքուր հոգին՝ ըստ իւր վերջին բաղձանաց, բուն հրեշտակաց տօնի օրը աւանդեց անոնց ձեռքը:

Ս. Աթուոյս կողմանէ, սիրեցեւոյն Բարթողիմէայ իբրեւ վերջին յարգանք ու երախտիք, յոյժ փառաւոր յուզարկաւորութիւն մի եղաւ. Եկեղեցւոյ կարգադրութեան հանդիսադիրն էր Ամեն. Ս. Պատրիարք Հայրն, որ շրջապատեալ էր եօթն եպիսկոպոսներէ, 30էն աւելի վարդապետներէ և բազմաթիւ սարկաւազներէ ու դրպիրներէ. կային նաև բաւական թուով միաբան, ուխտաւոր և քաղաքացի ժողովուրդներկայից իւրաքանչիւրի դիմաց վերայ խորին թախծանաց արտայայտութիւն՝ և շատերու այտից վերայ վշտի արտաբերաց կայլակներ կը նշմարուէին. միթէ չա՞րժէր յիշել թէ՛ Վեհ. Կաթողիկոսն ևս առանձին տեղ մը կանգնած՝ կը դիտէր վշտագին տխուր արարողութիւնը, և իբրեւ հայր համայնից, իւր որդւոյը թախծանաց հաղորդակից կը լինէր: Սոյն արտաբերուող և պատկառելի արարողութեան աւարտման՝ Նաթուղիկոս և Պատրիարք՝ երկուքին ծերունազարդ Հայրապետը, արտաբերին կ'երթան ի Վեհարան, և հանդիսին գլուխ անցնելով Ս. Աթուոյս Պատր. Փոխանորդ Գեր. Տ. Երեմիա Սրբազան Արքեպիսկոպոս՝ կը յուզարկաւորեն հէք ննջեցեալն ի վերջին հանգստարան իւր. հոն՝ ի հոգ լիցեցընելու ատեն Բարթողիմէայ սիրելի և բազմախնամ տեսուչը՝ Գեր. Տ. Գէորգ Ծ. վարդ. Երէցեան՝ թէ՛ և համառօտ՝ բայց գեղեցիկ և օրտառու զամբանականով մը հանգուցելոյն երկտասարդ կեանքի նկարագիրն ըրաւ՝ Աւետարանի շուշանին նմանեցնելով զայն, ի վեր հանեց նորա բարեմասնութիւնները և ի վերջոյ դիմառական ձեւով մը գէպ յերկինս բարի երթ մաղթելով աւնոր՝ կնքեց իւր խօսքը: Դամբանականէն յետոյ աւարտելով վերջին արարողութիւնը՝ բազմութիւնը ցրուեցաւ տխուր տալաւորութեան աակ:

Աստանօր մեք ևս կը կնքեմք մեր գերուած, հանգուցելոյն երանական կեանք և և վշտակիր ծնողաց ու հարազատիցը՝ երկնից մխթաբութիւն հայցելով:

Ս. Երուսաղէմ 14 Նոյ. 1892

Դ. Վ. Յ.

ՇԱՐ

ՀԱՅ ԿԵՆՍԱԳՐԱԻԹԵԱՆՅ

ժ.Ա.

ՄԵԾ—ԱՊՐՕ 25.11.91

(Շար. նախորդ բիւլեն)

Կրէտէի Ս. Կարապետ եկեղեցին և իրեն կալուածներն՝ Ապրո-25էլէպի թողած յիշատակներուն փառապսակը կրնայ համարուել:

Սոյն եկեղեցւոյն և յարակից կալուածական խնդիրն՝ այսօր աղգ. վարչական սեղանին վրայ օրակարգի կարեւոր խնդիրը նկատուած լինելով, կ'արժէ որ քիչ մը մանրամասնեմք զայն:

Կրէտէ կղզւոյն Քանտիա քաղաքին Ս. Կարապետ եկեղեցին, Նորին Ազնուախոյ-

լութիւնը Վենետիկցիներէն գնած, և հիմնական նորոգութեամբ՝ խաչած և հայկական ոճոյ վերածել տուած է 1669-1670ին:

Ս. Կարապետ՝ 500 քառակուսի գետնի վրայ քարուկիր կառուցեալ, յարակից փոքր տունովը և գերեզմանատունովը՝ չորս փողոցներէ շրջապատեալ և կղզիացեալ կեդրոնավայր մ'է. շուկային խիստ մօտը գրտնուելուն համար՝ մեծ արժէք ունի, որ հետզհետէ բարձրանալու վրայ է: Ականատես և այցելու Առակապի Տէր-Մինասեան Վահան Ծ. վարդապետ կը հաւատէ թէ՛ Լատին մայրապետը մինչև 25,000 լիւրայի գնել առաջարկած են զայն:

Սոյն թաղին մէջ 11 կտոր քարուկիր փոքր տուններ և քաղաքէն դուրս իբր չորս արտավայր ձիթատան մը 17 հսկայ ծառով, և ուրիշ գերեզմանատուն մ'ալ ունիմք, որք նոյնպէս Ապրո-25էլէպի անունը մշտնջենաւորող յիշատակներ են: Սոյն գերեզմանատան մէջ այժմ 200 ոսկւոյ արժէքով միայն քար կը գտնուի. իսկ ձիթատանը և կալուածները եթէ բարեք խնամուին, ամսական 1800 դր. ի մօտ հասոյթ մը կը բերեն եղեր, զոր ցարդ փոփոխակի իւրացուցեր են և կը շարունակեն իւրացնել այս ու այն տեղացի անձինք, մերթ Պետրոս Սիմոն անուն անձ մը, եւ մերթ Մարկոս կամ Մկրտիչ անունով Հայ-Հոռոմ մը, եւ երբեմն ալ ուրիշներ:

Վերոյիշեալ գերեզմանատան մէջ թաղուած են մահտարաժամի զոհ գնացող վարդապետ մը, Կրետացի Սիմոն եւ Ստեփան քահանայք եւ այլք, ինչպէս եւ Մեծ-Եւպարքոս Ալի փաշայի անդ գտնուած ատեն՝ Մայր Եկեղեցւոյ Աթաբեկական Տէր-Սիմէօն քահանային հետ բաւական թուով ի Կրէտէ գնացող եւ մեռնող Հայ գործաւորք:

Վերոյիշեալ քառակի փողոցներէն մեծ-փողոցն Հայոց-փողոց յորջորջել տուած է Ապրո-25էլէպին, որոյ անունն արձանագրուած է, իբրեւ կանգնիչ նոյն եկեղեցւոյն, մագաղաթեայ ձեռագիր ճաշոցի մը յիշատակարանին մէջ, յորում յիշուած է նաև Բերայի նշանաւոր Տէր-Չաքարիայի անունը, որ Անդրիանուպոլսեցի Պօղոս Պատրիարքի օրով վտարուած էր անդ:

Այդ պատմական ճաշոցին մէջ՝ Ապրո-25էլէպի կենսագրութիւնն արձանագրուած է, ինչպէս նաև Կրէտէի Հայ գաղթականութեան պատմութիւնը՝ յորում յիշուած է ի մէջ այլոց, Կրետացի Արախամ Կաթողիկոսին(1) հօրը՝ Արմենիոսի անունը, որ յոյժ սիրելին է եղած Ապրո-25էլէպին: Ճաշոցը Կրէտէէն ի Պոլիս փոխադրուած և պահուած է Մայր Եկեղեցւոյ գանձարանը:

(1) Սա՛, 1734—37, յաւուրս Նատըր Շահին, որոյ խիստ սիրելին էր, յորինած է իւր կաթողիկոսական օրերուն պատմութիւնը, և Նատըր Շահին վրայ հետաքրքրական ծանօթութիւններ տուած: Այս գիրք առաջին անգամ տպուած է 1796ին ի Կալիպթա, և երկրորդ տպագրութիւնը յիշմիածին եղած և ընծայուած է պարոն Մկրտիչ Սանասարեանցին «ի հաւաստիս ջերմեռանդն զգացմանց և ի նշան երախտագիտութեան»:

Միհրդատեանց Թաղէոսի թողած 300 կտորէն աւելի հին և նոր հեղինակաց ձեռագրաց մէջ կը գտնուի նաև «Պատմութիւն ժամանակագրական, գրեալ Տ. Արախամու կաթողիկոսի սրբոյ էջմիածնի Կրետացւոյ» անտիպ գիրքը:

1887ին Կրէտէէն Տ. Մինասեան Վահան վարդապետի ձեռք բերուած 30 կտոր ձեռագրաց մէջ կը գտնուի հինաւորաց հաղուագիւտ Շարական մ'ալ, որ կը պարունակէ Ապրո-25էլէպիին մի ուրիշ յիշատակարանը: Կը գտնուի նաև ուշագրաւ Տօնացոյց մը, ընտրեւորացն հաւաքածոյ մը, որոյ ընդօրինակութիւնը Հայր Ալիշան քանիցս գրեց և խնդրեց Տիտես. Խորհուրդն, իւր վերջին նկատելն միայն մէջ, ի մի հաւաքելով այս ձեռագիրներէն 18 կտորը, տպարակի մը մէջ դրաւ, կնքեց և ի պահ դրաւ Պատրիարքարանի գանձարանին մէջ:

Ամեն. Տ. Յարութիւն Պատրիարք իւր հետ Երուսաղէմ տարաւ մնացեալ 12 կտոր ձեռագիրներն, ինչպէս և Կրէտէի Եկեղեցւոյն Ս. Լուսաւորչոյ պատկերն, որոյ արձանագիր վկայութիւնն կը հասկցուի թէ՛ Վենետիկի Երեւման Ս. Խաչ եկեղեցին Հայ ազգին սեպհականութիւնն է: Ապրո-25էլէպին Լիվոռնոյէն ի Կրէտէ փոխադրեր է սոյն պատկերը, որ հինգ տարի առաջ Պօլիս բերուած էր, Վալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցին դրուելու համար:

Կրէտէի Ս. Կարապետ եկեղեցին՝ քաջան յորջորջմամբ Ս. Ստաւածածանայ հրաշագործ պատկեր մ'ունի, որ տակաւին անդ կախուած կը մնայ: Այս պատկերին «թռչուն» ըսուելուն պատճառն է, իբր թէ՛ քանիցս փորձեր են այլուր փոխադրել այդ պատկերն, բայց դարձեալ եկեր՝ իւր տեղն հաստատուեր է: Տեղացիք շատ կը փախնան եղեր այս հրաշագործ պատկերէն, այս պատճառաւ է որ ցարդ չեն համարձակած մնասել Եկեղեցւոյն: Աղգ. Հիւսնդանցի Հոգարարձութիւնն ալ քանիցս փախաբեցաւ այդ հրաշագործ պատկերն Ս. Փրկչեան մատուռը փոխադրել տալ, բայց չը յաջողեցաւ, թերեւս մի և նոյն գաղափարով տոգորեալ անձանց խորհրդոյն անստով:

1866ին ի Պոլիս զրկուած են Կրէտէի Եկեղեցւոյն և կալուածոց 13 կտոր հեռքները:

1887ին՝ Տ. Վահան Ծ. վարդապետ(1) Պոլիս բերաւ Քանտիայի Ս. Կարապետ եկեղեցւոյն, գերեզմանատան և կալուածոց յատակագծերն՝ վաւերացեալ տեղական կառավարութեան ճարտարապետին, Պէլտի-յէի և խտրէի ժողովոյ և կուսակալին կողմանէ, որք բաց ի ձիթատանէն՝ միւս սեպհականութեանց 8000 կանգունէն տե-

(1) Աղգ. Կեդր. Վարչութեան կողմանէ պաշտօն յանձնուած էր իրեն, տարահովութեան և հսկողութեան ներքեւ տունու ի Կրէտէ Աղգին ունեցած սեպհականութիւններն, անոնց վիճակն օրինաւորութեան վերածել, վարձուց հաշիւներն՝ որոցմէ որ պէտք է՝ պահանջել, մասնաւորաց վրայ գտնուած գումարները գանձել, կալուածները՝ նոր, տարահով և շահաւոր պայմաններով վարձու տալ, և այս ամէն գործողութեանց արդիւնքը տեղեկագրել:

Վահան վարդապետ իւր պաշտօնը ըստ կարեւորն կատարած, և իւր կրկնական ուղեւորութեան տպաւորութիւնները Արեւելքի մէջ օրն օրին գրելէն ու հրատարակելէն զատ, 1887 սեպտ. 25 թուականաւ տեղեկագիր մը մատուցած է ժամանակին առ Աղգ. Վարչութիւնն, յանձնելով ընդ նմին միանգամայն Քանտիայի եկեղեցւոյն և կալուածոց մասին կարգ մը վաւերագիրներ և եկեղեցւոյն սեպհական եղող անօթից, զգեստուց, իրեղինաց և մատենից ցուցակներն:

լի եղած լինելը կը հաստատեն: Սոյն յա-
տակագիծք կը մնան այժմ՝ ի Պատրիարքա-
րանի:

Կրէտէի եկեղեցւոյն թանկագին անօթ-
ներն ու զգեստներն, մեծաւ մասամբ Ապ-
րօ-Չէլէպիի յիշատակներն, Պատրիարքա-
րանի յանձնուելու համար զրկուած են
1866ին, սակայն կ'ըսուի թէ՝ փոխանակ
Պոլիս բերուելու, Զմիւռնիոյ Ս. Ստեփան-
նոս եկեղեցին տարուած են, որոց ցանկն
անշուշտ ստացած է ցարգ Տնտեսական
Խորհուրդը:

Եւ տակուին Կրէտէի եկեղեցւոյն մէջ
կը մնան՝ եկեղեցական կարգ մը անօթներ և
զգեստներ և պատկերներ, ձեռագիր եւ
տպագիր մատենաներ, եւ այլն:

Իսկ եւ լսած եմ քահանայէ մը թէ՝ Կրէ-
տէի եկեղեցիէն Պոլիս ալ փոխադրուած են
արծաթ խաչեր եւ անօթներ, եւ Մայր-Ն-
կեղեցւոյն գանձարանին մէջ պահուած են՝
իբրեւ աւանդ, մինչեւ ցնոր անօրինութիւն
Ազգ. Կեդր. Վարչութեան:

Կրէտէի կղզւոյն Հայ բնակիչք՝ Վենետ-
կոյ ուսումնասիր Հայ գաղթականք էին, որ
հոն եկած են 1666ին, բայց չեն բերած ի-
րենց հետ իրենց տպարանը, եւ ոչ ունե-
ցած են նշանաւոր դպրոց մը:

Կրէտէի Հայ գաղթականութիւնք՝ եկե-
ղեցւոյն կից գերեզմանատունէն զատ, քա-
ղաքէն դուրս ալ գերեզմանատուն մը ունե-
ցած են, որ խիստ ընդարձակ է: Առաջ-
նոյն կիսոյն վրայ Յոյնք՝ եկեղեցի մը կա-
ռուցած են, ինչպէս վերջերս Պատրիար-
քարանին ծանուցած է Կրէտէին՝ Քանախա
քաղաքին Օսմ. Թղթատան պաշտօնեայ
Թորոս Էֆ. Հովու ձեռն անուն հայազգին,
որ եւ Կրէտէի եկեղեցւոյն եւ եկեղեցա-
պատկան կալուածոց նկատմամբ մեծական
տնօրինութիւն մը խնդրած էր Ազգ. Կեդր.
Վարչութեան:

Կրէտէի եկեղեցին չէն էր, ոսկերիչ Մե-
քիսեղեկ ապա Նիքիաքանին Միւթէվէլի-
ութեան օրով: Մեքիսեղեկ պաշտ. Սահ-
մանադրական գործէմքէ 1868ին հրաժա-
րած է այդ պաշտօնէն:

Այժմ կը լսուի թէ՝ Կրէտէի Կրէտէի ա-
ւելի արդիւնաւոր նկատուած է Ազգ. Կեդ-
րական Վարչութեան կողմէն, և նոյն
պաշտօնին համար բնակիչք առաջարկուած՝
հանգուցեալ Մեքիսեղեկ պաշտ. պայազա-
տը՝ Տնտեսական Խորհրդոյ առեւտրապետ
Մեքիսեղեկ Նիքիաքան Էֆէնդին:

Հանգ. Վարժապետեան Տէր Նէրսէս
Պատրիարք Կրէտէի եկեղեցւոյն և կալուա-
ծոց խնդրոյն կարգադրութեան համար
գիտում Երած էր կղզւոյն նոյն Ժամանակի
կուսակալ Վսեմ. Ծօթիատէս փաշայի, և
Նորին Վսեմութեան պատասխան ընդու-
նած թէ՝ նոյն եկեղեցին ու կալուածներն՝
Յոյն հասարակութեան ոտնձգութիւններէն
ապահովելու համար միջոցներ ձեռք առ-
նուած են թէ՛ սակայն անոնց պահպա-
նութեան եւ հսկողութեան հոգն անկարող
տնօր մը վրայ մնացած է:

Գիտեմք թէ՛ ի Կրէտէ, երկու գիւղեր
կը գտնուին, որք Ապրօ-Չէլէպիի Ժամանակ
հայաբնակ եղած եւ տոհմային անուններով
յորջորջուած են:

Այդ գիւղերուն մէջ՝ այժմ Հայ գերեզ-

մաններէ զատ, ուրիշ ազգային յիշատա-
կութիւն մը մնացած է(1):

(Շարունակելի)

Ա. Յ. ԱՅՂՍԱՅԱՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Պ. Կլասաթօն որ այժմ Պիարիոյ
(Ֆրանսա) կը գտնուի տօնական օրերուն
առթիւ կազմուելու համար, անց-
եալ շաբթու իւր 844 ծննդեան տարե-
դարձը կատարեց, ընդունելով յամե-
նուստ շնորհաւորական գրեր ու նուէր-
ներ:

—Ի Բեդերսպուրկ պիտի սկսի մեծ
նաւահանգստի մը շինութիւնը, որ պի-
տի աւարտի մինչև 1895. յառաջիկայ
տարւոյ համար մէկ միլիոն ըուպլի ծախք
որոշուած է:

—Բասթօր՝ հռչակաւոր Ֆրանսայի
քիմիադէսին 70րդ տարեդարձը տօն-
ուեցաւ անցեալ շաբթու ի Բարիկ:

—Պուլկարիոյ մէջ նոր օրէնք մը կը
տնօրինէ որ ապրանքով հատուցող
տասանորդի տեղ դրամով հատուցանե-
լի տուրք մը գանձուի:

—Զուիցերիոյ հետ Ֆրանսայի Առե-
ւտրական նախարար Պ. Ժիւլ Ռօշի կըն-
քած առեւտրական դաշնագիրը, որով
քանի մը նպաստաւոր բացառութիւն-
ներ կը շնորհուէին Զուիցերիոյ, Ֆրան-
սայի Երեսփ. Ժողովոյ կողմանէ անվաւեր
հռչակուեցաւ, Զուիցերիոյ մեծ է Զուի-
ցերիոյ մէջ:

—Քրուրի զինագործարանը որ թըն-
թանօթ, երկաթուղեաց ձողեր և կառ-
քեր կը շինէ, 25 տարւոյ պայմանաժա-
մով միացաւ Մակոնէպուրիի Կրիլոն գի-
նագործարանին հետ որ մարտանաւոց
զրահներ կը շինէ:

—Ռուսիոյ զինուորագործականց ար-
դիւնքն այս տարւոյ համար 904566 հո-
գի եղաւ, որոց 262400ը միայն դործօն
բանակին մէջ առնուելով, մնացեալը
պահեստի զօրաց կարգը դասուած են:

—Աֆղանստանի Էմիրը իւր գանձա-
պետ ճան Մուհամմէտ Խանը՝ 20 ոսկի
րուրի իւրացուցած լինելու կատկածու-
նօք ձերբակալել տուեր է:

—Եգիպտոսի նախարարապետ Մուս-
թաֆա Ֆէհմի փաշա Թոքախտէ կը տա-
ռապի:

—Պուլկարիոյ Սպարանիէին մէջ Սահ-
մանադրութեան վերաքննութեան ձեռ-
նարկուած է:

(1) Աւագոյնն է Կրէտէի ազգ. կալուա-
ծոց մատակարարութիւնը յանձնել Ն-
րոսաղիմայ Պատրիարքութեան, որպէս զի
անդ մնացուն եկեղեցական մը յղէ, որ մի-
անգամայն այցելու հովուի պաշտօն վարէ
Միջերկրականի կղզեաց Հայ գաղթականաց,
եւ իւր ծախքը ստանայ Կրէտէի կալուածոց
հասցիքէն, որոց նորոգութիւնը նոյնպէս
կրնայ ստանձնել նոյն պատրիարքութիւնը,
եթէ կամի՝ նոյն իսկ մասնաւոր հանգանա-
կութեամբ, ըստ անցելոյն օրինակի:

—Ռուսիոյ կառավարութեան Կա-
կարին շոգենաւային ընկերութեան տըր-
ուած նպաստը յառաջիկայ տարւոյ հա-
մար կրկնապատկուած է:

—Գերմանիոյ կառավարութիւնը ա-
մէն ջանք ի գործ կը դնէ զինուորական
նոր օրինագծին քուէարկման համար:

Ա. Ր. Ժ. Բ. Դ. Ր. Ս. Ո. Յ.

Օսմ. լիբան 100 դր2 45

Մէքիսեղեկ	107 36	Վեցնոց	100
Քառորդ մէքիս	107 10	Բուսիոյ Բօլ	90 8
Մանր մէքիս	103 20	Նաբօլէոն	88
Մէթալիք	95 30	Դրիմից	51 20
Հինգնոց	100	Անգլ. լիբան	110 13

Մանէթ Թղթադրամ 9 8

Գ. օնտիտէ	23 15	Բուս. Երկ. բաժին	87 50
Թահիլ. Օսմ.	81 10	Թապիլիք	20 20

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ատանայի նահանգին կուսակալ ա-
նուանեցաւ՝ Թէհրանի Օսմ. նախորդ-
դեսպան Նուսուհի պէյ: Ատանայի նա-
խորդ կուսակալ Հաճի Իզդէթ Էֆէնտի
փոխանորդաբար պիտի պաշտօնավարէ
մինչև ցժամանումն նորընտիր կուսա-
կալին:

—Ի Պէնհաղի, տիրող սովուն պատ-
ճառաւ, արոց գանձումը պիտի յետա-
ձգուի:

—Մզկիթ մը պիտի շինուի ի Բեդ-
րսպուրկ՝ տեղւոյն Իսլամ հասարակու-
թեան համար:

—Ճարտարապետը վկայագիր պիտի
տոանան Քաղաքապետութեան կողմանէ
և անկարողք պիտի արգելուին ճարտա-
րապետութիւն ընելէ:

—Վեհ. Սուլթանը 750 ոսկի շնորհեց
Յունաց Պատրիարքարանին, 250 ոսկի՝
Հայ-Հռոմէական Պատրիարքարանին, ծը-
նդեան և նոր ճարւոյ տօներուն առ-
աւթիւ:

—Հալէպի նահանգին մէջ տասը տա-
րիէ ի վեր ասպատակող Մուլուհ աւա-
ղակապետը՝ երկու ընկերներով ձերբա-
կալուեր է:

—Թարսուսի բանտին մէջ բանտարկ-
եալներէ ութ անձինք, թէև պատը ծա-
կելով փախչիլ փորձեր են, սակայն Ժա-
մանակին իմացուելով՝ չեն յաջողեր:

—Հալէպի մէջ տանկ երեւան ելեր է:

—Էնկիւրիի և Հայտար բաշայի մի-
ջև երկաթուղոյ կառախմբոց երթեւե-
կութիւնք սկսան գեկտ. 19ին:

—Երկրագործական Դրամատան ընդ-
հանուր ծախքերէն մնացած 220000 ոս-
կին դրամագլխոյն վրայ աւելցնել որոշ-
ուած է:

—Հանրային առողջութիւնը Կարնոյ
ու շրջակայից մէջ գոհացուցիչ է: Ի
Տրապիզոն հնտախտն անհետանալու վը-
րայ է: Հնտախտն սկսելէն ի վեր, Տրա-
պիզոնի ու շրջակայից մէջ ընդամենը 657

դէպքը և 367 մահ պատահեր են: Բարերդէն դեկտ. 8 թուականաւ կը դրեն մեղ. «Հնտախոր գրեթէ բոլորովին անհետացած է աստ. 7-8 օր կայ որ բնաւ դէպք պատահած չունի»: Վերջին օրերս որ և է դէպք չէ պատահած ի կարին և ի վան:

— Զինուորական մասնախումբ մը, որ պատրաստած էր Եւրոպական թուրքոյ քարտէսը, այժմ Այստինի նահանգը կը գտնուի ուր սկսած է պատրաստել Ա. սիական թուրքոյ քարտէսը:

— Ուրիշին անցագիրը իբրեւ իրենցը գործածող անձինք, 25 զրուշի ասուգանաց պիտի դատապարտուին:

— Գրէտի Լիւնէ դրամատան կողմէն Պէրլին զրկուելու համար գերմանական նամակատան յանձնուած Բուժէլի երկաթուղւոյ 10 պարտատուներէ, որք պահարանի մէջ գրուած էին, 6ը ճամբան կորսուեր են, կորսուած պարտատուներու թիւերն ուստիկանութեան տրուած են որ խուզարկութիւններ կը կատարէ, զի կրնայ պատահիլ որ այդ պարտատուներ մայրաքաղաքիս սեղանաւորայ վաճառուին:

— Պէնկագիւ մէջ տիրող սովին պատճառաւ 2000 չափ տեղացիք Զմիւռնիա գնացեր են: Ասոնցմէ մաս մը Այստին, թիւէ ու Գասպպա զրկուեր են:

— Ի Պէյքօղ կառուցեալ թղթի գործարանին բոլոր մեքենայք զետեղուած և փորձերը կատարուած լինելով, բացումն ի մտոյ տեղի պիտի ունենայ:

— Կեսարիոյ թղթատարը յետ սյսորիկ չաբաթը 4 անգամ պիտի զրկուի երկուշաբթի, ուրբաթ, շաբաթ և կիւրակէ:

— Սէլանիկ-Տէտէ Աղաճի երկաթուղւոյն արտօնութիւնը գործադրելու համար դրամատեարց խմբակ մը կազմուած է:

— Արեւ-Գամասկոս երկաթուղւոյն շինութիւնն սկսած է:

ԼՈՒԹՈՒՄՆ ԶԴՐ ՀԱՆՆԵԼՈՒԿԻ

Կէս լեցուն տակառը միւս չորս կէս լեցունին վրայ պարպելով, կ'ունենանք 8 ամբողջ լեցունով ի միասին՝ ընդամենը 12 լեցուն եւ 12 պարապ տակառ, զորս 3 հոգիի բաժնելով, իւրաքանչիւրը պիտի առնէ 4 լեցուն եւ 4 պարապ տակառ:

Ճիշդ լուծումը պարունակող նամակներէն առաջինը կը կրէ Հրանտ Համաձեան ստորագրութիւնը: Բայց որովհետեւ Աղնաւորեան էֆ. Բառարանը տալ խոստացած էր առաջին լուծողին՝ եթէ «Ծագէ» բառը գտնուի, որոշած էր: որպէս զի բառարանը իւր նպատակին ծառայէ՝ տալ զայն «Ծագէ» բառանորդաց մէջէն առաջին անգամ լուծողին, որ է Յովհաննէս էֆ. Տէր—Յ. կորեան:

Ձանազան ձեւերով ճիշդ լուծած են նաեւ՝ Ա. Թ. Կէզիւրեան, Ս. Բուլճեան, Սարգիս Սահակեան, Սիմէօն Անտօնեան, Սեդրաք Բրուտեան, Սեդրաք Մարտիրոսեան, Գասպար Գաբրիէլեան, Ա. Թորգոմեան, Ժամկոչ, Մկրտիչ Տէր—Աթանասեան, Ներսէս Ճիւղբեան, Օննիկ Արզումանեան, Սրբուհի

Ռուբէնեան, Եղիսարեթ Ս. Գաբրիէլեան, Կ. Մկրտիչեան, Գաբրիէլ Մ. Զարուհեան, Արամ Կիւմիւշեան, Միսաք Խիւտապէտեան, Համբարձում Խոսրոսանճեան, Արշակ Չէլէպեան, Մարտիրոս Պէրպէրեան, Արտաշէս Միսաքեան, Մ. Զիթեան, Գրիգոր Տէր—Գաբրիէլեան, Պարթեւ Ն. Ծալեան:

ՅԴՐ ՀԱՆՆԵԼՈՒԿ

Մարդ մը, պարտիզէ մը իւր ձեռքը խնայող ժողովուրդէն, ուստի կ'երթայ պարտիզայանի մը և անոր հետ հետեւեալ դաշնադրութիւնը կընէ:

1. — Մարդը պիտի կարենայ ուղածին չափ խնայող ժողովուրդէն և ասոր համար պարտիզայանը բնաւ առարկութիւն ընելու իրաւունք պիտի չունենայ:

2. — Մարդը պարտիզէն դուրս ելնելու ատեն երեք դռներէ պիտի անցնի և իւրաքանչիւր դռն առջին իւր ունեցած խնայողին կէսը և ասկէ զատ խնայողի մը կէսն ալ հոն պիտի ձգէ:

3. — Մարդը խնայող կտրելու համար դանակ, ազուրակ և ուրիշ ուէ գործի չը պիտի գործածէ:

4. — Վերջապէս, երբ դռներէն անցնելէն յետոյ, քովը խնայող մը միայն պիտի ունենայ:

Արդ, կը խնայողի դռնէլ թէ՛ մարդը ընդամենը քանի՞ խնայող պիտի առնէ և՛ իւրաքանչիւր դռն առջեւ՝ զանոնք ի՞նչպէս պիտի բաժնէ:

Առաջին լուծողը՝ Եթէ «Ծագէ» ի բաժանորդ է՝ պիտի ստանայ մէկ փունջ գիտական Տօք. փաշաեանի:

Յ. Մ. ԱՋՆԱԽՈՐԵԱՆ

ԾԱՂԻԿ՝ ԳՐԱՍԵՆԵԱԿԻՆ ՄԵՋ ԿԸ ԾԱԽՈՒԻՆ

ՄԱԼԻԻՄԱԹԸ ՄԻԻՖԻՏԷ. — Գիրք թուրքերէն ընթերցանութեան. 2 զրէ:

ԳՕՆԹ-Է-ՓԱՐԱՊՕԼ. — Գաղղիերէն համանուն գիրքը նոյնութեամբ տպուած. գրքին ետեւը բառգրկոյլ մը աւելցուած է թրքերէնով. մեր ազգային վարժարանաց մէջ կրնայ մուտ դնել իբրեւ դասագիրք ընթերցանութեան և թարգմանութեան ֆրանսերէնէ ի թուրք. նոյնպէս անոնց համար՝ որք սոյն երկու լեզուներն ի միասին ուսանելու փափաքն ու պէտքը կ'զգան:

ԳՐԱՍԵՆԵԱԿ ԶԱՆՁՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ

Գրասենեակս կը շարունակէ՝ իւր բազմաթիւ թղթակիցներու հաշուոյն՝ կատարել գնումն և վաճառումն ամէն տեսակ տեղական բերքերու և եւրոպական ապրանքաց:

Մասնաւոր գործառնութիւն ամէն լեզուէ և ամէն տեսակ գրքերու վրայ: Կ'ըստանանք տպագրութիւնն յայտարարութեանց, առևտրական նամակաց կամ չրջարբարականաց, նամակադրութիւններու, այցետոմսերու, գիրքերու, և այլն: — Այցետոմսը՝ մէկ կամ երկու տող՝ 100 հաւը 10 զրէ. 1 զրուշ ալ փոստի ծախք:

Գնումն և առաքումն Եւրոպական և Օսմանեան ամէն տեսակ արժէթղթերու և բաղդատումներու, մասնաւորապէս Արեւելեան երկաթուղեաց բաղդատումներու: Այս վերջնոց գիններն են. ամբողջ տոմսը՝ 7 1/2 զրէ. կէս տոմս՝ 5 զրէ. քառորդը՝ 3 զրէ. դաւառներէն պէտք է զրկել նաեւ փոստի ծախքը: Արեւելեան երկաթուղեաց վիճակահանութիւնը տեղի պիտի ունենայ յառաջիկայ յունվ 20ին:

Արեւելեան երկաթուղեաց մինչև ցարդ տեղի ունեցած վիճակահանութեանց մէջ՝ պարտատուներ մը չափած կամ չչափած լինելն իմանալու համար, կը բաւէ գրել մեղ բաղդատումին թիւն, զրկելով նաեւ հինգ զրուշի Օսմանեան նամակադրոշմ՝ կատարուելիք խուզարկութեանց համար:

Գրասենեակս կապակցութիւններ հաստատած լինելով մայրաքաղաքիս ամենէն ձեռնհաս փաստաբաններէն ոմանց հետ, կ'ստանանք նաեւ դաւառացւոց քիմիքի, իսքիմաֆի, քիտղգապը Շերիի վարաբերեալ դատերն, Զեքվահանի վերաբերեալ գործեր, և ըն. և ըն: «ԾԱՂԻԿ» Ի ԲԱԺԱՆՈՐԳԱՅ գրական յանձնարարութիւնը կը կատարուին առանց վարձքի, իսկ ուրիշ կարգի յանձնարարութեանց համար կ'առնուի դոյզն յանձնարարողէն մը:

ՊԱՇՏՕՆ խնդրող ուսուցիչք կը հրաւիրուին գրասենեակս՝ արձանագրուելու. նաեւ անոնք որք ուսուցիչ կը փնտռեն վարժարանաց կամ մասնաւոր դասերու համար:

Դիմել առ Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ, Կ. Պոլիս, Պահլէ-Գաբու, Թաշխան:

այս գիրքը շատ օգտակար կրնայ լինիլ Գին 3 զրէ:

ՄԻՐԱԹ-ԻԼ-ԻՊԼԻ. — Ընդհ. ազգաց պատմութիւն է այս ընդարձակ և պատկառելի հեղինակութիւնը: Հեղինակը, հաշակաւոր պատմագէտ: Տխարպէքիցի Սայիտ փաշա, իւր այս գլուխ գործոցը գրած է այնպիսի անկողմնակալ ոճով մը, որու նմանն գրծուար է գտնել Եւրոպացի շատ մը պատմագիտաց գրեանց մէջ: Ինն ստուար հատորներէ կը բաղկանայ, լեզուն պարզ և գիւրահասկանալի է: Գինը 90 զրէ:

ԹԱԼԻՄԻ ՔԻԹԱՊԷԹ ՎԷ ՄԻԻՖԻՏԷՄԱԼԻ ԻՆՇԱ. — Նշանաւոր դրագէտ Ռէշատ պէյի այս ընտիր գործը գրուած է բոլորովին նոր ոճով, և ուրիշ կարգ մը «Ինշա»ներու մէջ գտնուած հին և այլ ևս անգործածական ոճերու փոխարէն՝ կը պարունակէ պաշտօնական և ոչ-պաշտօնական ամէն տեսակ գրութիւններ, շնորհաւորական, միտիւարական, յանձնարարական, առևտրական և ընտանեկան նամակներ, այլեայլ պաշտօնատանց տրուած աղբրագրեր, դաշնագրեր, պարտամուրհակներ, և այլն: Կը պարունակէ նաեւ նշանաւոր դրագիտաց ընտիր գրուածներէն մէկ մէկ նմոյշ: 12 զրէ:

ՕՍՄԱՆԼԸ ԹԱԼԻՄԻ. — Գործ նոյն հեղինակին. պարզ ոճով կը պատմէ Օսմանեան մեծագոր կայսերաց կեանքն ու գործերը. զարդարուած է իւրաքանչիւր կայսեր կենդանագրով: Գին 5 դահեկան:

ՄԷՃՄՈՒՅՅԻ ԹԱՊԻՐԱԹԸ ՐԷՄԻՅԷ. — Կառավարական ամէն կարգի պաշտօններու գաղղիերէն և թուրքերէն համապատասխան անունները պարունակող կարեւոր գործ մ'է: 2 զրէ:

ԱԽԼԷԱԳ ՄԻԻՏԷՐՐԻՍԻ. — Կրնայ ծառայել իբրեւ ընթերցանութեան դասագիրք. կը պարունակէ ընտիր բարոյալից հատուածներ: Գին 3 զրէ:

ԱՐՏՕՆԱՏԷՐ Ա. ՍԱԳԱՆԱՆ